

ԳՐԱԽՈՍՈԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Յ Ա Խ Յ Ա Կ

Հ Ա Յ Զ Ե Ռ Ա Յ Ա Յ

Բ Ե Ի Տ Ա Յ Ա Կ Ա Յ Մ

Օքսֆորդի համալսարանի նախկին պրօֆէսոր, բրիտանական Ակադէմիայի անդամ, և Հայագէտա Ֆրէդերիկ Քորնուալիս Քոնիբրէր յիշեալ վերնագրով մի ստուար հատոր է յզաֆ Ամենայն Հայոց Հայրապետ Գէորգ Ե. վեհ. կաթոլիկոսին:

Այս անգլիերէն մատենալը կազմուած է զիտնական անթերի խնամքով և ուսումնասիրութեամբ նոյն ինքն Պրօֆեսոր Քոնիբրէրի:

Մատենի նախարարն գրել է Բրիտանական Միւզէի Որեւէլեան ապած գրքերի և ձեռագրերի պահպանող, դոկտոր Լ. Գ. Բարնէտ, ուր նա յայտնում է թէ այդ ցուցակի մեջ նկարագրուած ձեռագրերի հաւաքածոյն, թէպէտ ոչ յոյժ բազմաթիւ, սակայն ներկայացնում է հայ գրականութեան զանազան ճիւղերը, և ներփակում է բաւական թւով հին և հազուագիւտ գործեր, ինչպէս նաև շատ բեկորներ, որոնք հետաքրքրական են իր ամյշներ հնագրութեան: Հաւաքածոյն աճմանը նթացքի մեջ է եղել շատ տարիներից ի վեր, հատոքներից շատերը պատկանելիս են եղել Սլոն, Հարլի, Լէօնդոն, Արունցէլ, Կերբրատոն և Սուո Նշանաւոր հին ընտանիքների մատենադարաններին, որովք տպա կտակուել են Բրիտանական Միւզէին:

Խակ աւելի վերջին ժամանակներում մի քանի հետաքրքրական ձեռագրիներ գնուել են հանգուցեալ Ծափի մատենադարանից, ինչպէս և Մանչեստրի երեսմնի հոգեսոր հովիւ հանգուցեալ Պարոնեան վարգապետից, և լն:

Պրօֆեսոր Քոնիբրէր իւր ներածութեան մեջ յայտնում է թէ այն նպատակն որով նա ի նկատի է ունեցել կազմելու սոյն ցուցակն ոչ այլ ընչ է եթէ ոչ ուրիշ գիտնականներին ազատել նրանում նկարագրուած ձեռագրերն խորացնելու նեղութիւնից: Նա փորձառութեամբ զիտէ որքան ձանձրալի

է ձեռնարկել համբողգութեան, և դուցէ մի երկար համբողութութեան, որպէսզի քննէ ձեռագիրներ, մինչդեռ այդպիսի նեղութեւնից զերծ մնացած կը լինէր, եթէ նոցա մի գոհացուցիչ ցուցակն գոյութիւն ունենար: Այս իսկ պատճառաւ սոյն հաւաքածոյի հատորներից մանաւանդ ոմանք նա արժան է համարած նկարագրել այնպան շատ մանրամասնութեամբ: Նա փափակած է ծանօթացնել հայ գրականութիւնը ուսումնասիրողներին լիօրէն և ճշորէն իւրաքանչիւրի պարունակութեան հետ, չթողնելով ու և է տարտամ յոյս գտնելու նոցանում այն՝ ինչ որ չէ կարելի գտնել:

«Մօտ երեսուն տարի առաջ, ասում է Քոնիբրէր, Վեր: Պարոնեան վարդապետն ոկտաւ այս հաւաքածոյի մի ցուցակը, և նորա չըրացած գործը մնում է, և յոյժ օգտաւէտ եղաւ ինձ: Նոյն իսկ բացի խորին յարդանքից որ են երկարամեայ ծանօթութեանո ընթացքում ուսաց զգաւ գէպի Հայ եկեղեցւոյ անձնուեր և վեհամիտ զաւակը, այն առաջնորդութիւնն որ նորա ծանօթագրութիւններն հայթայթեցին ինձ՝ պահանջում է մի աւելի մեծ բան, քան մի անցողակի յշշատակութիւն: Նա ծնաւ մօտ ութուն տարի առաջ Ստամբուլի մի թաղում և իւր կրթութեան համար զրկուեցաւ Վենետիկի ոուրբ Ղազարի վանքը, որոյ միաբանութեան մի անդամն եղաւ ապա: Իւր գրասիրութեան հետևանոք նա կարգուեցաւ մատենագրանապետ, և այդ պաշտօնում նա անցրեց իւր կեանքի ամենաելքանիկ տարիները: Նորա փորձութիւնները սկսան Վատիկանի 1870-ի ժողովից յետոյ: Հռոմի իշխանութիւնը գրել էր մի անժողովքական կրօնապետ Թոուրքիոյ հայ կաթոլիկների վրայ, և մի ասժամանակ Վենետիկի միաբանութեան հաւատարմութիւնն գէպի Վատիկանի խիստ լարուած էր: Պարոնեան անկարող էր բռնաբարել իւր խիզճը, և թողուց վանքը: Նորա հին ընկերակիցները յարգեցին նորա բաժանմուն շարժառիթները, ինչպէս որ նա ևս յարգեց նոցա մսալու շարժառիթը, և երբ 1903-ին նա ներկայ եղաւ վանքի հաստատման երկնարիւրամեակին հանդիսականների միջնե նա, այժմեան պապի հետ միասին, ամենապատուաւոր հիւրեցի շարբումն էր: Նա արդէն միջին տարիքին անց էր կացրել երբ թողեց Վենետիկ: Իւր ապրուստը ճարելու հարկադրեալ, գտաւ փոքր ինչ գործ Փարիզի Ֆրանսական Ազգային Մատենադարանում, այնտեղից իւր քայլերը ուղղեց գէպի Լոնգոն դրեթէ լքեալ: Միաժամանակ հնագոյն և մեծագոյն ազգային Հայ եկեղեցին ընդունել էր նորան իւր ծոցն, և ապա նա նշանակուեցաւ Մանչեսթրի Հարկադրեալ, գովել եկեղեցւոյ հովեւ: Երբ մահ

վրայ հասաւ նորան ութ տարի առաջ, նա զբաղուած էր Զքսֆորդ քաղաքի Բողէան Մատենագարանի հայ ձեռագիր-ների ցուցակի պատրաստութեամբը, այդ հեմնարկութեան կողմից ևս իմ վրայ է ընկնում նորա աշխատութիւնը լրաց-նելու բարեօպաշտ պարտականութիւնը:

Պլոփ. Քոնիբէր իւլ այս աշխատութեան համար յայտ-նում է թէ իբր օրինակ ունեցել է Ակեննայի Մխիթարեանց ձեռագրերի ընտիր ցուցակը պատրաստուած նոյն միաբանու-թեան անդամ հայր Գաշեանի ձեռքով։ Նա չէ հետեած աշ-բեմտեան արտասանութեան ոճին, այլ ընդունած է ոսկե-դարեան կամ արդի Արարատեան արտասանութիւնը։ Նա հաւասարապէս անտեղի է համարում մի ցուցակի մէջ ի կիր արկանել Հիւրցմանի պէս գետնական լեզուաբանների գործաշ-ժած խորհրդանշանները։ Սորա նպատակ ունեն ի յայտ ըերել հայ հաշիւնների ազգակցութիւնը ու յարաբերութիւնըն Հնդկա-ներոպական լեզուների հնդիւնների հետ ընդհանրապէս, և միայն իմաստ ունեն համեմատորէն լեզուաբանական ու-սումնասէնների համար։

Ձեռագրերից ոմանց մէջ հայերէն տառերով արձանա-գրուած կան բազմաթիւ էջեր արաբերէն և պարսկերէն, որոնց մերուծումն արել է պրոֆ. Դաւիթ Մարգարիութ և Բրիտա-նական Միւղենի պաշտոնեաններ, որոց աջակցութիւնն Քոնիբէր յիշատակում է առանձին շնորհակալութեամբ։

Հայ ձեռագրերի սոյն անդիններէն ցուցակը բաղկացած է 410 էջերից, ընագրի չափն է 17×22 սանթիմէթը, իսկ լուս-սացըն 25×31 , տպագրութիւնն յոյժ մաքուր է, մատեանն ունի ամուր և հաստ կազմ։ Բըհատնական Մուղէում ըռլոր Հայ ձեռագրերի թիւն է 149, որոնցից 24-ը Կատակրան են, միւս-ները՝ Սաղմոս, Ժամագիրը, Մաշտոց և այլ կրօնական պատ-մական, բանաստեղծական մոդական, աշխարհագրական, օ-րէնսդրական ևն մատեաններ։ Խրաքանչիւր ձեռագրի մասին Քոնիբէր տալիս է լիակատար ուսումնասիրական ծանօթու-թիւն, միանդամայն յառաջ ըերուած են իւրաքանչիւր ձե-ռագրի մէջ եղած բոլոր յիշատակարաններն հայերէն լեզով և ապա նոցա անդիններէն թարգմանութիւնը։ Նա իւր այս ձեռագրին մէջ հաւատարմաբար հետեած է այն գրութեան, որ ընդհանուր է Անդմիական ըոլոր միւզէններին և ամեն հնու-թեանց վերաբերեալ, այսինքն պահպաննել ամեն ձեռագրի կամ հնութեան ծագումը և յաջորդական պատմութիւնը—ձեռա-գրերի կամ հնութեանց կցուած կամ ալիսակներ, ուր տպուած են թէ նորա երբ և ումսից են կտակուած, կամ ում հաւա-

քածոյն են, կամ ումնից, երբ և քանիսով են գնուած; Աւոտե
և շե թոյլատըլում նոցա ժադան հետ կապուած յիշատակ-
ներն և անհատական ջանքերը կորսուեն կամ զանցառութեան
ու մառացութեան տրուեն:

Անդլիական այս սովորութիւնը նոցանում նկատուած է
իր մի անդանցեռելի պարտականութիւն, որ կապուած է ձե-
ռադրի կենսագրութեան հետ: Փափակելի է որ մեր հայ մա-
տենադարձաններն եւ իրենց ուղղեցոյց ունենալին այս պա-
տուական ու առաքինի սովորութիւնը և փոքրուգարար չըդ-
տէին ոչնչացնել այլոց ջանքերի հետքերը:

Թթեատանական Միւզէում ամենահին հայ ձեռադիրը մե-
նաւարան է, որ թուական չունի, բայց միայն ունի մի յի-
շատակարան աւելի յետնագոյն զարերի ձեռադիր է և զրած
է այսպէս «զո՞ց Եղիսէ զբամանող սուլիք աւետարանիս որք-
ընթեռալք յաղաւթոյ յիշեսջիք»:

Այս Աւետարանը երկաթագիր է և գրերը յոյժ նման են
Մոսկուայի Լազարեան ճեմարանում եղած իններորդ զարի
թուակիր Աւետարանին: Գրերի ընդհանուր առանձնայատ-
կութիւնից երեսւմ է թէ այդ Աւետարանը յամենայն դէպս
գրուած լինելու է իններորդ դարի սկզբին:

Պրօֆ. Քոնքըէրի այս ընտիր և բազմաշխատ գործն ար-
ժանի է հայ գրական աշխարհի մեծարանացն և մենք ամենքո
պարա ենք շնորհակալ լինել այս անդլիացի գիտականին մեր
ձեռագրերի պատմութեանն մատուցած այս մեծ ժառայու-
թեան համար:

Պ. Տօնակետոմի.

Haik Johannissian, Das literarische Porträt der Ar-
menier bei ihren Historikern vom V.—VIII. Jahrh.
n. Chr. mit einer Einleitung über ihre Abstammung, historische
Entwicklung und Geschichtsschreibung.

Rötha bei Leipzig, 1912.

Պ. Հայկ Յոհաննիսեանի սոյն գործը, հակառակ իր ընդար-
ձակ վերնագրին, շատ աւելին է պարունակում իր մէջ, քան այդ
վերնագրից կարելի էր եղբակացնել: Սա մի նոր քննական հայոց
պատմութիւն է, որ բովանդակում է իր մէջ Ե—Ը դարերի շրջանը
մանրամասն և նախընթաց ու յաջորդ շրջանները հակիրճ, բայց
խնամու ուսումնասիրութեամբ՝ սկսելով նախապատմական ժա-
մանակներից, թէն բուն ուսումնասիրութեան նիւթը կազմում են